ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 104

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքը (Սառնակունք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքը (Սառնակունք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը:*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
09-081-0102-0001 կադաստրային ծածկագրից 9.08719 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր և 3.8128 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող	09-081-0102-0001 կադաստրային ծածկագրից 9.08719 հա մակերեսով և 3.8128 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության էներգետիկայի հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Սիսիան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Սառնակունք բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի (Սառնակունք բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «24» «մարտի» 2025 թ.